Federal Ministry for Economic Cooperation and Development

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

caritas Germany

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

Տեղական մակարդակում «կանաչ» և նորարարական գաղափարների իրականացման համար

Նկարագրություն	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը «Արևային էներգիայի կիրառումը որպես կենսապայմանների և առողջական վիճակի բարելավման միջոց» ծրագրի շրջանակներում հայտարարվում է ***փոքր դրամաշնորհների*** մրցույթ: Դրամաշնորհների տրամադրման **նպատակն** է. • Խթանել տեղական մակարդակում «կանաչ» և նորարարական գաղափարներների և նախաձեռնությունների վերհանմանը, • Աջակցել այդօրինակ նախաձեռնությունների իրականացմանը: Մրցույթին ներկայացված հայտերից մրցութային հանձնաժողովը կընտրի լավագույն 2 ծրագիր-առաջարկները, որոնց իրականացման համար կտրամադրվի դրամաշնորհ՝ **500,000**-ական դրամի չափով: Հայտերն ընդունվում են 2022թ. **հոկտեմբերի 27-ից** մինչև **նոյեմբերի 8-ը ներառյալ:** Մրցույթի արդյունքների մասին կհայտարարվի նոյեմբերի 10-ին:
Դրամաշնորհների քանակը	Ընդհանուր՝ 2 դրամաշնորհ
Դրամաշնորհների չափը	Յուրաքանչյուր դրամաշնորհը՝ 500,000 ՀՀ դրամ
Դրամաշնորհի իրականացման վայրը	Շիրակի մարզի համայնքներ, բնակավայրեր
Իրականացման ժամանակահատված	**Նոյեմբեր 10-ից մինչև նոյեմբեր 30-ը, 2022թ.**
Ովքեր կարող են դիմել	Համայնքային նախաձեռնող խմբեր, դպրոցական խմբեր/ խորհուրդներ, հասարակական կազմակերպություններ, և այլն:
Պայմաններ	➢ Ներկայացված ծրագիր-առաջարկը պետք է ենթադրի տեղական մակարդակում (համայնք, բնակավայր) իրականացվելիք գործողություններ,

	➢ Ծրագիր-առաջարկը պետք է ենթադրի համայնքային կամավորական ներգրավվածություն, ➢ Հայցվող գումարը չպետք է գերազանցի 500,000 ՀՀ դրամը, ➢ Ծրագիրային գործողությունների պետք է իրականացված, ավարտված լինեն մինչև 2022թ. նոյեմբերի 30-ը, ➢ Ծրագրի վերջնական նկարագրական և ֆինանսական հաշվետվությունները պետք է ներկայացվեն ծրագրի ավարտից հետո երկու շաբաթվա ընթացքում: ➢ Ծրագիր-առաջարկում ընդգրկված ծախսերը պետք է ուղղված լինեն ծրագրային գործողությունների իրականացմանը (աշխատավարձ կամ այլ անուղղակի ծախսեր չեն ընդունվում):
Դիմելու կարգը	Ծրագիր-առաջարկը պետք է կազմված լինի. • 1-2 էջ պատմողական մասից (տե՛ս ծրագիր-առաջարկի ձևաթուղթը ներքևում), • բյուջեից և ծախսերի նկարագրությունից:
«Կանաչ գաղափարների» օրինակներ	Համայնքային նշանակություն ունեցող տարածքի կամ պատմամշակութային կոթողների շրջակայքի մաքրում աղբից, գետերի հուների մաքրում, աղբամանների տեղադրում, էներգախնայողության և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ և այլ նորարարական գաղափարներ, որոնք դրական ազդեցություն կունենան համայնքի շրջակա միջավայրի, կենսաբազմազանության կամ բնակիչների համար:

Հայտերն անհրաժեշտ է ուղարկել ***info@caritas.am*** *էլեկտրոնային հասցեին (**PDF** ֆորմատով)*

կամ առձեռն հանձնել տպագիր տարբերակով հետևյալ հասցեով՝ Հայկական Կարիտասի գլխավոր գրասենյակ, հասցեն.

Գյումրի, Հ.Սարգսյան փողոց, 3-րդ նրբանցք, տուն 8: Հեռախոս՝ (0312) 5-72-01; www.caritas.am

Պարզաբանումների և հայտերի լրացման աջակցության համար կարող եք դիմել՝ **(+374) 77 61-69-11**

ԾՐԱԳԻՐ-ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

1.	*Տիտղոսաթերթ* (ծրագրի անվանումը, իրականացման վայրը, շահառուները, տևողությունը, ընդհանուր արժեքը, կոնտակտային տվյալներ)
2.	Հիմնախնդրի և կարիքների հակիրճ նկարագրություն
3.	Ծրագրի նկարագրություն, նպատակի ու խնդիրների սահմանում
4.	Իրականացվելիք գործողությունների հակիրճ նկարագրություն, ժամանակացույց
5.	Ծրագրի շահառուները (օր.՝ համայնքի բնակիչներ), քանակ
6.	Ակնկալվող արդյունքներ
7.	Բյուջե

Բյուջեի նմուշօրինակ

#	Նկարագիր	Միավոր	Միավորի քանակ	Միավորի գին	Ընդամենը
1.	Բահ	հատ	10	3000	30000
2.	Ձեռնոց	զույգ	20	250	5000
3.	-----				
4.	-----				
	Ընդամենը				***35.000***